Համատեղ հռչակագիր

Հայաստանի Հանրապետության եւ Խորվաթիայի Հանրապետության միջեւ ռազմավարական երկխոսության մասին

Հայաստանի Հանրապետությունը եւ Խորվաթիայի Հանրապետությունը, այսուհետ՝ Մասնակիցներ,

ընդգծելով Մասնակիցների ընդհանուր ցանկությունն ու վճռականությունը՝ ընդլայնելու եւ խորացնելու իրենց համագործակցությունը քաղաքականության, տնտեսության, պաշտպանության, անվտանգության, արդարադատության, մշակույթի, կրթության, շրջակա միջավայրի, սոցիալական հարցերի, երիտասարդության եւ սպորտի ոլորտներում,

հաստատելով իրենց գործընկերության հիմքում ընկած հիմնական արժեքները, որոնք ներառում են ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության, միջազգային իրավունքի վրա հիմնված միջազգային կարգի եւ դիմակայուն, միասնաբար կարգավորվող առեւտրային համակարգի պահպանման պարտավորությունը,

շարունակելով հավատարիմ մնալ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին եւ նորմերին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ եւ Հելսինկյան եզրափակիչ ակտում սահմանված նպատակներին եւ սկզբունքներին,

նպատակ ունենալով նպաստել տարածաշրջանային եւ միջազգային անվտանգությանը, կայունությանը եւ խաղաղությանը,

վկայակոչելով Հայաստանի Հանրապետություն-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված շրջանակը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետություն-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգով սահմանված առաջնահերթությունները,

կարեւորելով ԵՄ-ի «Գլոբալ դարպասներ» ծրագիրը, ինչպես նաեւ Հայաստանի

«Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը եւ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) նախագիծը՝ տարածաշրջանային կայունությանը եւ տարածաշրջանային ու միջտարածաշրջանային կապերի զարգացմանը նպաստելու համար,

վերահաստատելով Հայաստանի ձգտումը՝ ամրապնդելու քաղաքական, տնտեսական, անվտանգային եւ սոցիալական կապերը Եվրոպական ընտանիքի եւ ժողովրդավարական պետությունների ավելի լայնամասշտաբ համայնքի հետ,

ձգտելով որակապես նոր մակարդակի բարձրացնել իրենց երկկողմ հարաբերությունները,

Մասնակիցները սույնով հայտարարում են ռազմավարական երկխոսություն սկսելու մասին հետեւյալ կերպ.

1. Քաղաքական երկխոսություն, տարածաշրջանային եւ միջազգային համագործակցություն

1.1 Մասնակիցները կպահպանեն եւ կակտիվացնեն բարձր մակարդակի շփումները երկու երկրների քաղաքական առաջնորդների եւ գործադիր ու օրենսդիր մարմինների ներկայացուցիչների միջեւ:

1.2 Մասնակիցները պարբերական քաղաքական խորհրդակցություններ կանցկացնեն՝ երկկողմ հարաբերությունների, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ մտքեր փոխանակելու եւ դիրքորոշումները համակարգելու նպատակով:

1.3 Մասնակիցները կանցկացնեն պարբերական երկկողմ ոլորտային խորհրդակցություններ՝ Հայաստանի ժողովրդի եվրոպական ձգտումներին համապատասխան: Այս ջանքերն ուղղված կլինեն ԵՄ չափանիշներին Հայաստանի օրենսդրության մոտարկմանն աջակցելուն, ինքնիշխանության եւ դիմակայունության բարձրացմանը, ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանը, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանը, Հայաստանի տնտեսության, ինչպես նաեւ առեւտրի բազմազանեցումը խթանելուն,

Հայաստանում եվրոպական ներդրումները խրախուսելու նպատակով ԵՄ շուկա մուտքը դյուրացնելուն՝ որպես այդ նպատակների առաջմղման առանցքային տարր հատուկ շեշտադրելով գիտելիքների փոխանցման միջոցով կարողությունների զարգացումը:

1.4 Մասնակիցներն ակտիվորեն կհամագործակցեն միջազգային, համաշխարհային եւ տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի եւ այլ միջազգային հարթակների հետ:

1.5 Մասնակիցները կաշխատեն ժողովրդավարական հաստատությունների, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության, արդյունավետ կառավարման եւ հակակոռուպցիոն գործողությունների խթանման եւ ամրապնդման ուղղությամբ:

1.6 Մասնակիցները կընդլայնեն հաղորդակցությունը եւ խորհրդակցություններն իրենց ոլորտային գերատեսչությունների միջեւ՝ ինստիտուցիոնալ համագործակցությունը զարգացնելու եւ բազմաոլորտ համագործակցության օրակարգն ընդլայնելու համար:

1.7 Խորվաթիայի Հանրապետությունը ողջունում է 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ձեռք բերված համաձայնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջեւ «Խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի նախաստորագրումը եւ կշարունակի աջակցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ միմյանց ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման հիման վրա հարաբերությունների կարգավորմանը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը, Հելսինկյան եզրափակիչ ակտին (1975 թվական) եւ Ալմաթիի հռչակագրին (1991 թվական) համապատասխան:

2. Անվտանգություն, պաշտպանություն եւ արդարադատություն

2.1 Մասնակիցներն ընդունում են անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում համագործակցության ընդլայնման ներուժը եւ համաձայնում են ուսումնասիրել այդ ոլորտներում համագործակցության ամրապնդման հնարավորությունները:

2.2 Պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցությունը կշարունակի զարգանալ բարձր մակարդակի եւ աշխատանքային մակարդակի համաձայնությունների միջոցով:

2.3 Մասնակիցները կհամագործակցեն գլոբալ եւ տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների հետ՝ անվտանգության ոլորտում համատեղ մարտահրավերներին դիմակայելու համար:

2.4 Մասնակիցները հաստատում են ազատ, բաց, անվտանգ, կայուն, մատչելի, խաղաղ եւ փոխգործունակ կիբեռտարածության ապահովման իրենց հանձնառությունը:

2.5 Մասնակիցներն ընդգծում են անվտանգ եւ դիմակայուն թվային ենթակառուցվածքներ մշակելու, կիբեռանվտանգության քաղաքականությունների մշակումը եւ իրականացումը եւ կիբեռսպառնալիքներին դիմակայելու բնագավառում միջազգային համագործակցության ամրապնդումը խթանելու կարեւորությունը:

2.6 Կխթանվի համատեղ համագործակցությունը հատկապես կիբեռհանցագործության տարբեր ասպեկտների դեմ պայքարի մասով, ներառյալ՝ համապատասխան իրավապահ մարմինների միջեւ ուղիղ համագործակցության միջոցով:

2.7 Մասնակիցները կուսումնասիրեն ամպային հաշվարկների եւ տվյալների վերլուծության ոլորտում համագործակցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով թվային փոխակերպման համար ամպային տեխնոլոգիաների օգտագործմանը:

2.8 Ջանքեր կգործադրվեն Խորվաթիայի ուղղորդմամբ Հայաստանի

ամպային ենթակառուցվածքի մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ տվյալների պահման եւ ամպի վրա հիմնված լուծումների ոլորտներում:

2.9 Մասնակիցները կանցկացնեն պարբերական ոլորտային խորհրդակցություններ հանրային դիվանագիտության, հիբրիդային սպառնալիքների եւ ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտներում եւ հարակից բնագավառներում՝ փորձի փոխանակման եւ վերոնշյալ ոլորտներում առկա խնդիրները լուծելու համար:

2.10 Մասնակիցներն իրենց իրավասության շրջանակներում կզարգացնեն Օտարերկրյա տեղեկատվության մանիպուլյացիայի եւ միջամտության հակազդման, երկու երկրների պետական եւ մասնավոր հաստատությունների միջեւ փոխգործակցության ամրապնդման ոլորտներում փոխշահավետ համագործակցությունը:

2.11 Մասնակիցները կամրապնդեն համագործակցությունը արդարադատության ոլորտում, այդ թվում՝ քրեակատարողական եւ մարդու իրավունքների ոլորտներում:

2.12 Մասնակիցները կզարգացնեն համագործակցությունը պատերազմի վետերանների խնամքի, ինչպես նաեւ անհետ կորած անձանց որոնման ոլորտներում:

3. Տնտեսական եւ ենթակառուցվածքային համագործակցություն

3.1 Մասնակիցները վերահաստատում են տնտեսական եւ առեւտրային հարաբերությունների զարգացման ու ընդլայնման ուղղությամբ իրենց հանձնառությունը՝ առաջնահերթություն տալով այնպիսի ոլորտների, ինչպիսիք են արտադրական արդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, առողջապահությունը, ջրամատակարարման եւ ջրահեռացման ենթակառուցվածքների կառավարումը, թափոնների հեռացումը, օդի որակը, կենսաբազմազանությունը, հողերի կայուն կառավարումը, խելացի գյուղատնտեսությունը եւ վերականգնվող էներգետիկան:

3.2 Մասնակիցները կխթանեն համատեղ ձեռնարկություններն ու հետազոտական նախաձեռնությունները բարձր տեխնոլոգիական ոլորտներում, հատկապես՝ կիսահաղորդիչների, արհեստական բանականության, ռոբոտաշինության եւ ամպային հաշվարկների ոլորտներում:

3.3 Տնտեսական համագործակցությունն է՛լ ավելի կընդլայնվի՝ դյուրացնելով հաղորդակցությունը տնտեսական շահագրգիռ կողմերի, ստարտափների եւ ազատ տնտեսական գոտիների, ինչպես նաեւ ձեռնարկատիրական գոտիների միջեւ:

3.4 Մասնակիցները կաջակցեն ուղղակի ներդրումների խթանմանը՝ նպաստելով իրենց երկրներում բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանն ու պաշտպանելով միմյանց ներդրումները:

3.5 Ճանաչելով դեպի ծով ելք չունենալու եւ համաշխարհային առեւտրային շուկաներ սահմանափակ մուտք ունենալու հետեւանքով Հայաստանի առջեւ ծառացած բազմաբնույթ մարտահրավերները՝ մասնակիցները կամրապնդեն համագործակցությունը տարածաշրջանային եւ միջազգային առեւտրին եւ տրանսպորտային հաղորդակցությանը նպաստելու նպատակով, այդ թվում՝ աջակցելով միմյանց նախագծերին, ինչպես օրինակ՝ Հայաստանի «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը:

3.6 Համագործակցությունը միտված կլինի Կայուն զարգացման նպատակների իրականացմանը, նորարարության եւ տեխնոլոգիական առաջընթացի խթանմանը, ինչպես նաեւ անցմանը կանաչ տնտեսության: Հաշվի առնելով, որ Հայաստանը, որպես լեռնային երկիր, բախվում է ծայրահեղ եղանակային պայմանների եւ կլիմայի փոփոխության դանդաղ զարգացող հետեւանքների հետ, ինչը զգալի կորուստներ եւ վնասներ է հասցնում վերջինիս տնտեսությանը, ենթակառուցվածքներին եւ կենսապայմաններին, Մասնակիցները կհամագործակցեն՝ օգտագործելով կորուստների եւ վնասների համար ֆինանսավորման առկա եւ հեռանկարային մեխանիզմները՝ կլիմայի

փոփոխության հետ կապված կորուստներին եւ վնասներին առնչվող խնդիրների կարգավորման եւ աղետների ռիսկի նվազեցման ծրագրերի միջոցով բնական աղետների նկատմամբ դիմակայունության բարձրացման նպատակով:

3.7 Մասնակիցները կդիտարկեն կայուն պարենային համակարգերի, պարենի ապահովության ու անվտանգության եւ գյուղատնտեսության ոլորտներում համագործակցության հնարավորությունները՝ ներդնելով տեխնոլոգիական լուծումներ եւ ժամանակակից համակարգեր՝ պարենի եւ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման, ինչպես նաեւ ագրոբիզնեսի ոլորտում առեւտրի դյուրացման համար:

3.8 Համագործակցությունը միտված կլինի Հայաստանի եւ Խորվաթիայի խոցելի էկոհամակարգերում կլիմայի փոփոխության հետ կապված մարտահրավերների լուծման ուղիների ուսումնասիրությանը:

3.9 Մասնակիցները կկազմակերպեն համատեղ գործարար եւ տեխնոլոգիական համաժողովներ Հայաստանում եւ Խորվաթիայում՝ տրամադրելով հարթակ շահագրգիռ կողմերի հաղորդակցման, գաղափարների փոխանակման եւ համագործակցության համար:

3.10 Մասնակիցները կդիտարկեն միջազգային բարձր տեխնոլոգիական ցուցահանդեսներին եւ տեխնոլոգիական տոնավաճառներին մասնակցելու հնարավորությունը՝ ցուցադրելով իրենց հավաքական կարողությունները եւ ներգրավելով համաշխարհային ներդրումներ երկու երկրների տեխնոլոգիական ոլորտներում:

4. Արդյունաբերություն

4.1 Մասնակիցները կձգտեն ամրապնդել տնտեսական եւ առեւտրային հարաբերությունների զարգացման եւ ընդլայնման ուղղությամբ իրենց հանձնառությունները, այդ թվում ՝ արդյունաբերության ոլորտում համագործակցության ընդլայնման, նորարարական արդյունաբերական զարգացմանը նպաստող համատեղ միջոցառումների կազմակերպման, ինչպես

նաեւ ՏՀՏ ոլորտում, հատկապես անվտանգության հետ կապված տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության եւ սեփական ծրագրային լուծումների եւ ծառայությունների մշակման եւ ապահովման միջոցով:

4.2 Մասնակիցները կընդլայնեն համագործակցությունը եւ կփոխանակվեն վերամշակող արդյունաբերության, այդ թվում՝ դեղագործության, քիմիական եւ նավթաքիմիական արդյունաբերության, տեքստիլ եւ կաշվե արդյունաբերության, պարենի արտադրության, էլեկտրաէներգետիկայի, մեքենաշինության, պաշտպանության, փայտի եւ փայտամշակման, ցելյուլոզային եւ թղթե արդյունաբերության եւ գյուղատնտեսության ոլորտներում առկա փորձով:

5. Էներգիա

5.1 Մասնակիցները կզարգացնեն համագործակցությունը էներգետիկայի ոլորտում, մասնավորապես՝ կանաչ ջրածնի եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտում նախագծերի մշակման հարցերում:

5.2 Մասնակիցները մտադիր են կազմակերպել համատեղ խորհրդատվություններ կանաչ ջրածնի եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտում նախագծերի, մասնավորապես՝ արեւային եւ քամու էներգիայի ոլորտում նախագծերի մշակման, ինչպես նաեւ էներգիայի կուտակման եւ պահպանման վերաբերյալ:

6. Կրթություն, գիտություն, մշակույթ, զբոսաշրջություն եւ սպորտ

6.1 Մասնակիցները կնպաստեն մասնագիտացված կրթական եւ հետազոտական կենտրոնների, հաստատությունների, համալսարանների եւ դպրոցների միջեւ համագործակցությանը՝ փոխանակման ծրագրերի, դասընթացների եւ վարպետության դասերի միջոցով:

6.2. Խորվաթիան ընդունում է Հայաստանում Ակադեմիական քաղաք ստեղծելու հնարավորությունը՝ որպես ակադեմիական համագործակցության եւ նորարարության կենտրոն՝ կրթության եւ հետազոտության ոլորտներում համատեղ նպատակներին հասնելու համար:

6.3 Մասնակիցները կխթանեն Հայաստանի եւ Խորվաթիայի համալսարանների միջեւ ակադեմիական գործընկերությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արհեստական բանականությունը, ռոբոտաշինությունը, վերականգնվող էներգետիկան, քվանտային տեխնոլոգիաները եւ կիբեռանվտանգությունը՝ ուշադրությունը կենտրոնացնելով համատեղ հետազոտական նախագծերի եւ դասախոսների/ուսանողների փոխանակման վրա:

6.4 Կամրապնդվի մշակութային երկխոսությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանմանը՝ համագործակցելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ համապատասխան կազմակերպությունների հետ:

6.5 Մասնակիցները կաջակցեն մշակութային եւ ստեղծագործական ոլորտների համագործակցությանը, ինչպես նաեւ կխթանեն մշակութային հաստատությունների եւ կազմակերպությունների միջեւ համագործակցությունը:

6.6 Զբոսաշրջային հոսքերի ավելացման եւ իրենց ժողովուրդների միջեւ միջմշակութային կապերի ամրապնդման նպատակով Մասնակիցները կխթանեն համապատասխան պետական եւ մասնավոր շահագրգիռ կողմերի միջեւ առավել սերտ համագործակցությունը, այդ թվում՝ թվային հարթակների եւ համատեղ նախաձեռնությունների միջոցով:

6.7 Մասնակիցները կխրախուսեն մշակութային ժառանգության, կայուն զբոսաշրջության եւ ավանդական արվեստների եւ արհեստների առաջմղումը՝ նպատակ ունենալով բարձրացնել յուրաքանչյուր երկրի զբոսաշրջային ներուժի եւ մշակութային հարստության վերաբերյալ փոխադարձ իրազեկությունը, ինչպես նաեւ համագործակցությունը զբոսաշրջության կրթության ոլորտում՝ անհրաժեշտության դեպքում, ինստիտուցիոնալ գործընկերության, փորձի փոխանակման եւ համագործակցության այլ հնարավորությունների միջոցով:

6.8 Մասնակիցները կխթանեն համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության եւ սպորտի, այդ թվում ՝ մեծ սպորտի, սպորտային գիտության

եւ սպորտային բժշկության ոլորտներում:

6.9 Մասնակիցները կխթանեն երիտասարդների միջեւ փորձի փոխանակումը, մասնավորապես՝ երիտասարդների հետ աշխատանքի եւ երիտասարդության զարգացման ծրագրերի կազմակերպման, ինչպես նաեւ երիտասարդության ոլորտի շահագրգիռ կողմերի միջեւ փորձի փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով:

Սույն համատեղ հռչակագիրը չի առաջացնում միջազգային իրավունքով նախատեսված որեւէ իրավական կամ ֆինանսական պարտավորություն, եթե այլ բան գրավոր համաձայնեցված չէ երկու Մասնակիցների կողմից: Սույն համատեղ հռչակագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Մասնակիցներից որեւէ մեկն այն չի դադարեցրել՝ վեց (6) ամիս առաջ այդ մասին մյուս Մասնակցին նախապես գրավոր ծանուցելով:

Ստորագրված է _____ ում 2026 թվականի _____-ին, երկու բնօրինակից՝ հայերեն, խորվաթերեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Խորվաթիայի Հանրապետության կողմից՝**